Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՌՈՒՄԻՆԻԱ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սամվել Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բուխարեստ (Ռումինիա), 2018թ. նոյեմբերի 19-ից 21-ը

4. Հրավիրող կողմը

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին

6. Քննարկված թեմաները

2020-2022թթ. համար Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) անդամ պետությունների անդամավճարների հաշվարկման նոր մեթոդաբանություն, ՄՀՄԻ 2019թ. բյուջեի նախագիծ, ՄՀՄԻ գիտական խորհրդի կազմի փոփոխություններ, ասոցացված եվրոպական երկրների հետ համաձայնագրերի կնքման գործընթաց, ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքներ, «NICA» կենտրոնի գործունեություն

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (ՄՀՄԻ) անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին ներկայացվել են ՄՀՄԻ գիտական խորհրդի 124-րդ նստաշրջանի առաջարկությունները, ՄՀՄԻ գիտական և գիտահետազոտական աշխատանքների պլանի կատարողականը և միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի կատարման ընթացքը, ՄՀՄԻ 2019թ. բյուջեի նախագիծը, ՄՀՄԻ ֆինանսական գործունեության աուդիտորական ստուգման արդյունքները: Ներկայացվել են նաև ասոցացված երկրների հետ համաձայնագրերի կնքման գործընթացը, ինչպես նաև Ֆրանսիայի հետ նախատեսվող համաձայնագրի լրամշակված տարբերակը: ՄՀՄԻ գիտական քարտուղար Ա. Սորինը ներկայացրել է ՄՀՄԻ գիտական խորհրդի կազմի փոփոխությունները, ինչպես նաև Ուկրաինայի և Վրաստանի կառավարությունների լիազոր ներկայացուցիչները:

Քննարկվել են 2018թ. նոյեմբերի 16-17-ը կայացած ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նիստի արդյունքները, 2019թ. համար ՄՀՄԻ գերակա գիտական գործունեության խթանմանը միտված քայլերի հաջորդականությունը, 2018թ. բյուջեի կատարողականը:

2018թ. նոյեմբերի 20-ի առանցքային հարցերից էր ՄՀՄԻ անդամ պետությունների անդամավճարների հաշվարկման նոր մեթոդաբանությունը 2020-2022 թվականների համար: ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանի առաջարկով և փաստարկներով քննարկվել է Հայաստանի Հանրապետության 2019թ. ՄՀՄԻ անդամավճարը զեղչելու հարցը:

2018թ. նոյեմբերի 20-ին ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի անդամներին ՄՀՄԻ փոխնախագահ Ռ. Լեդնիցկին ներկայացրել է «NICA» կոլայդերի վրա կատարվող նախագծերը և հետազոտական ծրագրերը՝ մանրամասնելով իրագործման ընթացքում ստացված արդյունքների և յուրաքանչյուր անդամ պետության մասնագետների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին քննարկվել և հաստատվել են ՄՀՄԻ 2018թ. բյուջեի կատարողականը, ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի նոյեմբերի 16-17-ը կայացած նիստի արձանագրությունը, ՄՀՄԻ 2019թ. բյուջեն, ՄՀՄԻ գիտական խորհրդի նոր անդամների կազմը, ՄՀՄԻ զարգացման 7-ամյա պլանի (2017-2023թթ. համար) իրականացման հաշվետվությունը:

Հաստատվել են նաև ՄՀՄԻ անդամ պետությունների 2019թ. անդամավճարների ծավալները, որը ՀՀ ԿԳՆ ԳԿ նախագահ Սամվել Հարությունյանի ներկայացրած առաջարկների և փաստարկների արդյունքում Հայաստանի Հանրապետության համար նվազել է՝ 265 200 ԱՄՆ դոլարից (2018թ.) մինչև 262 500 ԱՄՆ դոլար (2019թ.):

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է ՄՀՄԻ անդամ պետությունների (2020-2022թթ. համար) անդամավճարների նոր մեթոդաբանության հաշվարկման նախագիծը լրամշակել և քննարկել ՄՀՄԻ անդամ պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների հաջորդ նստաշրջանին, որը նախատեսված է 2019թ. մարտ ամսին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

23.11.2018թ.